№ 18 Շաբաթ Փետրվարի 13 — 1888 — Շաբաթ Փետրվարի 13 № 18

ՏԱՍՆ ԵՒ ՎԵՑԵՐՈՐԴ ՏԱՐԻ

Տարեկան գինը 10 ռուբլի, կէս տարվանը 6 ռուբլի։
Առանձին համարները 7 կոպէկով։

Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ։

Մեր հասցէն. Тифлисъ. Редакція «Мшакъ».
Կամ Tiflis. Rédaction «Mschak».

ՄՇԱԿ

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ (Բացի կիրակի և տօն օրերից)։

Յայտարարութիւնը ընդունվում է ամեն լեզուով։

Յայտարարութիւնների համար վճարում են իւրաքանչիւր բառին 2 կոպէկ։

ՆԵՐԿԱՅ 1888 ԹՒԻՆ

„ՄՇԱԿ“

ԳՐԱԿԱՆԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԼՐԱԳԻՐ

Հրատարակվում է Թիֆլիսում, նոյն դիրքով և նոյն պրոգրամայով։ Մենք կը ստանանք սեփական ՀԵՌԱԳԻՐՆԵՐ։

«ՄՇԱԿԻ» *տարեկան գինը* 10 *ռուբլի է, վեց ամսվանը* 6 *ռուբլի։*

Գրվել «ՄՇԱԿԻՆ» *կարելի է* ԽՄԲԱԳՐԱՏԱՆԸ (Բարօնսկայա և Բազարնայա փողոցների անկիւնում, Թամամշեվի տանը։)

Կայսերութեան ուրիշ քաղաքներից «ՄՇԱԿԻՆ» *գրվելու համար պէտք է դիմել հետևեալ հասցէով.* ТИФЛИСЪ, Редакція газеты «МШАКЪ», *իսկ արտասահմանից.* Tiflis, Rédaction du journal arménien «MSCHAK».

Խմբագիր-հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Խմբագրութեան յարաբերութիւնը դէպի թղթակիցները.—ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. *Մարդասիրական ընկերութեան ընդհանուր ժողովը. Երևանի մսավաճառները և առողջապահական դրութիւնը. Նամակ Երևանից։ Նամակ Նոր-Բայազէտից. Ներքին լուրեր.*—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. *Թիւրքաց կառավարութեան չրջաբերականը. Մամուլի պատասխանը Բիսմարկին. Արտաքին լուրեր.*—ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ. — ՀԵՌԱԳԻՐՆԵՐ.—ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ.

ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ ՅԱՐԱԲԵՐՈՒԹԻՒՆԸ ԴԷՊԻ ԹՂԹԱԿԻՑՆԵՐԸ

—

Ինչ ուզում են ասեն „Մշակի“ թշնամիները, բայց պէտք է խոստովանվեն, որ 1872 թուից առաջ, այսինքն „Մշակի“ երևալուց առաջ՝ հայոց լրագրութեան մէջ չը կային թղթակցութիւնները այն մտքով, ինչ մտքով լրագրական թղթակցութիւն բառը հասկանում է եւրոպացին։ Հասարակաց կեանքի երևոյթների դիտելը, հասարակաց կեանքի մասին այլ և այլ իրողութիւնների հաղորդելը՝ թէ յօդուածների, թէ նամակների և թէ վերջապէս լուրերի ձևով,—այդ բոլորը սկսվեցաւ „Մշակի“ մէջ, և նրանից առաջ հայոց մամուլը կատարելապէս զուրկ էր թղթակիցների աշխատակցութիւնից։ „Մշակը“ տարիների ընթացքում պրոգրամներ էր տալիս իր թղթակիցներին թէ ինչ բանի վրա և ինչպէս պէտք է գրելու և տասն հինգ տարվայ ընթացքում կազմակերպեց թղթակիցների մի ամբողջ զօրագունդ, հաստատեց լրագրական թղթակիցների մի բոլորովին նոր դպրոց, նոր շկոլա։

Տարիների ընթացքում մենք մեր թղթակիցներին մանրաման պրոգրամ էինք տալիս թէ ինչ բանի վրա պէտք է գրեն և ինչպէս գրեն, ստացած թղթակցութիւնները ուղղում, փոփոխում էինք, առանց հաղորդած իրողութիւնների ձեռք տալու, ստացած հում փաստական նիւթից շատ անգամ ընդարձակ թղթակցութիւններ էինք կազմում, կամ ընդհակառակն ընդարձակ թղթակցութիւններից միայն լուրեր էինք քաղում, փոփոխում էինք ստացած նիւթերը այն չափով, որչափով հնարաւոր էր փոփոխել առանց դիպչելու թղթակցութեան էական մասին, հանում էինք միջից լօգիական սխալները, միմեանց հակասող տեղերը, մշակում էինք նիւթը, վերջնական եզրակացութիւնը շատ անգամ ջնջում էինք, եթէ այդ եզրակացութիւնը սխալ էր լինում.... վերջապէս ամեն մի յօդուած, ամեն մի թղթակցութիւն, ամեն մի նամակ, ամեն մի փոքրիկ լուր՝ թէ լեզուի և թէ մտքի կողմից ուղղվում, մշակվում, խմբագրվում էր և այդպէս էր լոյս տեսնում մեր լրագրի էջերում։

Այդպէս շարունակեցինք տասն և հինգ տարվայ անընդհատ աշխատանքը և պիտի շարունակենք, քանի որ դոյութիւն կունենայ „Մշակը“։ Եւ քանի որ թերթի խմբագրութիւնը մեր ձեռքում կը լինի, մենք թղթակցութիւնները մշակելու և խմբագրելու, նրանց մեր գիտեցած ուղղութիւնը տալու իրաւունքից՝ հրաժարվելու չենք։

Եւ երբ պատահում է որ մեր թղթակիցներից մէկը գրում է մեզ թէ չէ կամենում որ մենք փոփոխենք, ուղղենք, մշակենք, խմբագրենք, մեր կարծիքով միմեանց հակասող տեղերը, կամ առհասարակ անյարմար տեղերը թղթակցութեան միջից հանենք,—մենք նրան պատասխանում ենք՝ որ ամեն մի յօդուած, ամեն մի թղթակցութիւն, ամեն մի լուր ուղղելու և խմբագրելու իրաւունքը մենք մեզ ենք վերապահում և աչքի առաջ ունենալով նոյն իսկ լրագրի շահը և նրա աջողութիւնը, չենք կարող զիջանել այդ իրաւունքը թղթակցութիւնների հեղինակներին։

„Մշակի“ այսքան տարվայ թղթակցութիւնների բաժնի աջողութիւնը բացատրվում է նոյն իսկ դրանով որ մենք միշտ խմբագրում էինք այդ բաժինը մեծ խնամքով, զգուշութեամբ և մինչև անգամ խստութեամբ, միշտ ուղղելով գրողների ոչ թէ միայն լեզուի, բայց և մտքի լօգիկան և ամեն մի յօդուած, ամեն մի թղթակցութիւն, ամեն մի նամակ, ամեն մի լուր՝ յարմարեցնելով „Մշակի“ ընդհանուր ուղղութեանը, որպէս զի „Մշակի“ էջերում տպված ոչ մի տողը չը հակառակեր լրագրի ընդհանուր ուղղութեանը, չը շեղվեր նրա մի անգամ բռնած ընդհանուր ուղղութիւնից։

Գ. Ա.

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՄԱՐԴԱՍԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԸ

—

Հիմայ կը դամ ընթերցողին ծանօթացնելու այն խնդիրների հետ, որոնք ներկայացվեցան ընդհանուր ժողովին։ 1) Նուխու յաջորդը խնդրում է ընկերութիւնից Վարդաշէնի դպրոցի համար նշանակված 100 ռուբլու փոխանակ նշանակել 200 ր.։ Ընդհանուր ժողովը մերժեց այդ խնդիրը, պատճառաբանելով որ ընկերութիւնը միջոցներ չունի։ 2) Նոյն յաջորդը խնդրում է 200 ր. միանուագ օգնութիւն Սուլթան-Նուխու դպրոցի համար տուն շինելու։ Ժողովը մերժեց այդ խնդիրը նոյն պատճառով։ 3) Շամախու երկսեռ դպրոցների տեսուչը խնդրում է ընկերութիւնից, որ օրիորդական դպրոցի համար նշանակված 150 ր. փոխարէն նշանակվի 250 ր., որպէս զի յիշեալ դպրոցը կարողանայ պահպանել իր գոյութիւնը։ Մերժվեցաւ։ 4) Դուշէթի միդասեան դպրոցի հոգաբարձութիւնը խնդրում է նը-պաստ նշանակել յիշեալ դպրոցին։ Այդ խնդիրը նոյնպէս մերժվեց։ 5) Հին-Նախիջևանի դպրոցի հոգաբարձութիւնը խնդրում է ընկերութիւնից 1885 թուի նախահաշիւում մտցրած 100 ռուբլին, որ չէ ուղարկված իրաւացի պատճառներով, այժմ ուղարկել դպրոցին։ Խնդիրը մերժվեցաւ։ 6) Ներսէս Տէր-Ներսէսեանց խնդրում է ընկերութիւնից 60 ռուբլու փոխարէն նշանակել ս. Թարգմանչաց վանքի դպրոցին 300 ր.։ Սա այն երևակայական դպրոցն է, որի մասին արդէն վերևում պատմվեցաւ։ 7) Ռաֆայել Պատկանեան խնդրում է ընկերութիւնից նշանակել Նոր-Նախիջևանի «Արհեստաւորաց դպրոցին» երեք տարի ժամանակով տարեկան նպաստ 500 ր. դերձակութեան բաժին մտցնելու համար։ Այդ խնդիրը անհետևանք մնաց այն պատճառաբանութեամբ, թէ Նոր-Նախիջևանի հասարակութիւնը ինքը կարող է հոգալ իր դպրոցի համար։ Մերժվեցան և մի քանի ուրիշ երկրորդական խնդրագրերը մի քանի աշակերտների և ուսանողների կողմից։

Խնդիրների հարցը վերջանալուց հետ ընդհանուր ժողովը հաստատեց 1888 թուի համար հետևեալ նախահաշիւը։ Մուտք սպասվում է՝ դրամագլխի տոկոսից 4,000 ր., խաղատոմսերի կտրոնների 209 ր., տարեկան անդամներից 100 ր., նուիրաբերութիւններից 145 ր., հանդէսներից 300 ր., բանկի դիվիդենդ 10 ր., նկուղից վարձ 300 ր., Թումայեանի խոստացած 100 ռուբլի ս. (Թարգմանչաց վանքի համար)։

Ծախսը պիտի լինի այդպէս՝ Բագուի դպրոցին 3,000 ր., ծառային 100 ր., Խաչմաղի դպրոցին 50 ր., Ղուբայի դպրոցին 200 ր., Վարդաշէնի դպրոցին 100 ր., Ամիրվանի դպրոցին 200 ր., Սուլթան-Նուխու դպրոցին 200 ր., Ռուբ-ռբ դպրոցին 300 ր. (եթէ որ նա բացվի, որ ոչինչ հաւանականութիւն չը կայ), Շամախու օրիորդական դպրոցին 150 ր., Բէգլարքենդի 150 ր., ս. Թարգմանչաց վանքին 100 ր. (Թումայեանից ստացվածը), որդեգիր Ծատուրեանցին 120 ր., Ղարաջեանցին 150 ր., Բագուի բէալական դպրոցի 4 աշակերտաց ուսման վարձ 130 ր., խաղատոմսերի ապահովութեան 54 ր., գործավարական ծախք 100 ր., բարեգործական դէպքերի 200 ր., ընկերութեան հաշիւը տպագրելու համար 100 ր., չինութեան կարկատանաց 100 ր., աշակերտ Գիւրջեանցին 60 ր.։

Բացի զլխաւոր պարապմունքներից ընդհանուր ժողովը զբաղվեց ի միջի այլոց երեք կարևոր հարցեր քննելով, որոնց կարգով կը բերեմ։

Ժողովականներից մէկը նկատեց, որ Մարդասիրական ընկերութիւնը աւելի ու աւելի աշխատում է իր ոյժերը կենտրոնացնելու Բագուի դպրոցների վրա, չնչին ուշադրութիւն դարձնելով գիւղական դպրոցներին, և առաջարկեց փոխել այդ ուղղութիւնը։ Հարցը հարևանցօրէն քննելուց յետոյ ժողովը վճռեց հետևեալը. շարունակել աշխատել Բագուի դպրոցների համար առանց մի բան խնայելու, իսկ միւս կողմանէ աշխատել միջոցներ գտնելու նոյնպէս գիւղական դպրոցներին օժանդակելու համար։

Խորհուրդը խնդրեց ընդհանուր ժողովից, որ վերջինս մի յանձնաժողով կազմէ նոր կառուցանող դպրոցի տնտեսական գործերի մասին հոգալու։ Զանազան կարծիքներ լսելուց յետոյ ժողովը վճռեց յանձնաժողով կազմելը թողնել խորհրդի ազատ կամքին։

Քարոզիչների խնդիրը արդէն երրորդ տարին է որ քննվում է, բայց տակաւին լուծված չէ։ Մարդասիրական ընկերութիւնը կամենում է ունենալ մի շրջիկ քարոզիչ, որ զաւառներում ու գիւղերում շրջելով քարոզէ հայերէն սուրբ խօսքը։ Քարոզչի համար հարկաւոր է տարեկան 1000 ր.։ Այդ գումարի 600 ռուբլին խոստանում է տալ պ. Թումայեանց և 200 ր. անցեալ տարի խոստացել է պ. Գ. Դիլդարեանց, բայց այդ պարոնը այս անգամ չը կրկնեց իր խոստումը։ Տեսնելով որ յիշեալ 1000 ռուբլուց դեռ միայն 600 ռուբլու դոյութիւնն է հաստատ, ընդհանուր ժողովը յանձնեց խորհրդին աշխատել 400 ռուբլու համար և ապա քարոզիչ որոնել։ Այստեղ խնդիրը ծագեց քարոզչի անձնաւորութեան վերաբերեալ. յայտնի է, որ այսպէս թէ այնպէս գործը անցնելու է Էջմիածնի ձեռքով, ուստի ժողովականներից Ն. Աբելեանց, որ բաւական ծանօթ է Էջմիածնի միաբանութեան հետ, տարակուսում էր, թէ մի դուցէ քարոզչութեան կարևոր պաշտօնի համար ուղարկվի մի անարժան մարդ։ Իր նկատողութիւնը անելով պարոնը ցանկութիւն էր յայտնում, որ խորհուրդը քարոզիչ որոնելու ժամանակ մեծ զգուշութիւն գործ դնի։ Դրանով էլ վերջացաւ հարցը։

Ապա ժողովը սկսեց ընտրութիւններ անել։ Զը նայած մի քանիների անտեղի առաջարկութեանը, որ քուէարկութիւն չը լինի, բարեբաղդաբար դաղտնի քուէարկութիւն եղաւ։ Ընտրվեցան նոյն նախագահը և նոյն անդամները, բացի երկուսից, որոնց փոխարէն ընտրվեցան երկու երիտասարդներ։ Այնպէս որ խորհուրդը այժմ կազմված է հետևեալ անձինքներից. նախագահ՝ Անտոնեանց—(միաձայն), գանձապահ՝ Ղուկասեանց—(41 ձայնով) և անդամներ՝ Կարապետեանց—(59 ձայնով), Սաֆարեանց—(56 ձայնով), Կամկաճեանց—(44 ձայնով), Զաղեանց—(42 ձայնով), Գալստեանց—(38 ձայնով), Տէր-Մարկոսեանց—(56 ձայնով)—և Շահզէդանեանց (61 ձայնով)։ Ընտրութիւնը աջող է։

Մնում է ցանկանալ, որ նորընտիր խորհուրդը արդարացնէ իր վրա դրած յոյսերը, և եռանդուն գործունէութեան նոր ապացոյցներ տայ։ Ժողովը վերջացաւ դիշերվայ $1^1/_2$ ժամին։

Ս. Թ.

ԵՐԵՒԱՆԻ ՄՍԱՎԱՃԱՌՆԵՐԸ ԵՒ ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ ԴՐՈՒԹԻՒՆԸ

—

Երևանում տարածված են զանազան վարակիչ հիւանդութիւններ. չը կայ հիւանդանոց, որտեղ տեղաւորեն հիւանդներին, այդ պատճառով զոհ են գնում չատերը. նոյնպէս չը կան մարդիկ, որոնք կարողանան մոտենալ այդ հիւանդութիւններին առաջն առնելու, մինչև անգամ կարելի է ասել, որ այդ աւելորդ են համարում։ Բաւականանում ենք նրանով, որ եթէ մէկ հիւանդի տերը փող ունի, այն էլ միայն վերջին օրերում, նեղութիւն է տալիս գրպանին, մի քանի կոպէկ բաժին հանելով բժշկին, կամ դեղատանը։ Իսկ մեծ մասամբ դիմում են դալլաքներին կամ պառաւ գրբացներին ու ժողովրդական ինքնակոչ հեքիմներին։ Իսկ ով որ փող չունի, ասում է՝ «ինչ որ էլ լինի դիմի Աստուծու կամքն է։» Այս հանգամանքի վրա երկար խօսելը, մեր կարծիքով, աւելորդ է, որովհետև անդադար դրա վրա լրագրներում բողոքել են, և բողոքը՝ բողոք է մնացել։

Բայց մենք ցոյց կը տանք այստեղ մի մշտական աղբիւր, որտեղից առատապէս բղխում են հիւանդութիւնները Երևանում։

Երևանի մսավաճառները, մեծ մասամբ, նախապաշարմունքով լի, առողջապահական կանոնների հասկացողութիւնից զուրկ, տգէտ թուրքեր են։ Թէ ոչխար և թէ եզը մորթում են քաղաքից դուրս Զանդուի ափում, սրան յատկացրած տեղում։ Մսացուի գլուխը կտրելուց յետոյ, մորթողը բդի վերևից դանակով ծակում է կաշին և այնքան է փչում, որ կաշին մսից բարձրանում է, միանգամայն պոկվում է մսից։ Հինայով ներկած ձեռքերով մորթողը դուրս է տալիս փորոտիքը. փքով լցված փորոտիքը ծախում են հասարակ կերակուր եփողներին, որոնք հասարակաց լեզուով կոչվում են ճիզիվիղի ծախողներ, իսկ մսերը դարսած կեղտոտ կողովների մէջ, տանում են ծախելու տեղը. ծախող քալբային—ձեռքերը հինայած, առջևը կեղտոտ դոգնոցը քաշած (դոգնոցի այդ տեսակը բաղանիքներում փուտայի տեղ են գործ ածում), Մուհամէդի հարազատ որդին անդադար դոռդոռում է կանչելով առնողներին, մի կողմից էլ ջարդում է ոսկորը այն կոճղի վրա, որը ամրացրած է դեռնի մէջ, կըշ-

ռում է կեղտոտ կշեռքով և տալիս է առնողներին։ Այդ կոճղի վրա մնացած կեղտոտությունները ծախողի բացակայության ժամանակ թափառական շները լիզելով մաքրում են կոճղը, որոնցից շատերը կատաղում են։ Այդ բոլորից ոչինչ վնաս չէ նկատում քալբալայի մսագործը, միայն քրիստոնեան երբ սիալմամբ կամենում է ձեռքի շոչափմամբ մսի լաւ լինելը իմանալ, այդ դէպքում թուրքի կարծիքով պղծվեց միսը։

Ի թիւս ուրիշ գլխաւոր կենսական մթերքների քաղաքային վարչութիւնը ամիսը մէկ անգամ, երբեմն և աւելի յաճախ տակսա է նշանակում մսի վրա։ Այդ տակսան մնում է տակսա միայն աստիճանաւորների և քաղաքային վարչութեան մէջ ծառայողների համար, իսկ հասարակ ժողովուրդը միշտ նշանակած գնից ֆունտին մի երկու կոպէկ աւելի է վճարում. հակառակ դէպքում՝ միս չէ էլ ճարվում։

Մսավաճառը չէ նախատենում թէ օրվայ մէջ որքան ոչխար կարող է ծախվել, որպէս զի դրան համեմատ այն թւով ոչխար մորթել տայ։ Եթէ չը ծախվի, նրա համար հոգ չէ. մնացած միսը տալիս է իր հետ պայմանաւորված քաքաչոուն, որքան էլ որ միսը հին լինի, քաքաչին կարող է ծախել։

Քաքաչի կոչված կերակուր եփողները գտնվում են քաղաքի զանազան անկիւններում. սրանք պատրաստում են կեղտոտ ձեռքերով «լուլաքաբի և չոլմակ», հին մնացած մսերը ճարպի հետ լաւ ծեծում են, կեղտոտ ձեռքերով ճմռում են և չամփուրների վրա կոլորելով խորովում. իսկ «չոլմակ» պատրաստում են կեղտոտ կճուճի մէջ, մի քանի կտոր ոսկորներ լցնելով մէջը, վաճառում են մշակ և արհեստաւոր դասակարգի վրա։ Քաքաչիների համարձակությունը այն աստիճանի է հասել, որ մինչև անգամ նոցանից մէկը համարձակվել էր անցեալ ամառ հոտած մսի կտորը քաշել խանութի պատից։ Իմ ուշադրութիւնս դրաւվեց դորանով. բարեբաղդաբար այդ միջոցին անցնում էր ոստիկանական ծառայողներից մէկը, որի ուշադրությունը դարձրի այդ հանդամանքի վրա. նա էլ մսի հետ քաքաչին ուղարկեց ոստիկանատուն։

Մեր կարծիքով ժամանակ է այսպիսի անկարգութեանց առաջն առնել։ Դրա դէմ օրինական միջոցներ ասելով, վերջապէս առաջը կառնվի քաղաքի աղտաղնությունների մէջ այլ և այլ տարափոխիկ և վտանգաւոր հիւանդությունների տարածվելուն։

Ա.

ՆԱՄԱԿ ԵՐԵՒԱՆԻՑ

Փետրվարի 8-ին

Այստեղ վաճառականությունը ընկած է. վաճառականներից որին էլ դիմելու լինես, մի և նոյնը կը լսես՝ «ընտանիքս ապրուստ է պահանջում, խանութին վարձ պէտք է տալ, գիլդի պէտք է վեր առնել, բայց առևտուր բոլորովին չը կայ, եղածի մէջն էլ օգուտ չէ մնացել»։ Բայց արդեօք կարելի է ասել թէ մեզանում առևտուր չը կայ բոլորովին։—Ոչ։ Կովկասի մէջ Երևանը իր առևտրի շրջանառությամբ, իմ կարծիքով, աւելի մեծ տեղ է բռնում (Թիֆլիսը բացառութիւն է կազմում), որովհետև Երևանը իր հում բերքերով աւելի հարուստ է, քան թէ Կովկասի որ և է մի նահանգ։ Ուրեմն պարզ բան է, որ Երևանը աւելի լաւ առևտուր կունենայ, քան թէ Կովկասի ուրիշ նահանգները, բայց թէ ինչու է Երևանում վաճառականությունը այդքան յետ մնացել. այդ նրանից է, որ առևտրի մէջ օգուտ չէ մնացել, ինչպէս որ վաճառականը ինքն էլ է վկայում։ Մենք կասենք, որ վաճառականության յետ մնալու պատճառը նոյն ինքն վաճառականն է։ Ահա թէ ինչպէս. մեր խօսքը այն մեծամասնության վրա է, որոնք Երևանում առնում, Երևանումն էլ վաճառում են։

Առհասարակ երևանցի վաճառականը սովորություն չունի հաշուապահ ունենալ, և մինչև անգամ նա ափսոսում է մի երկու բուբլի տալ և մի երկու դրքում իր հաշիները պահել, թէև հասարակ կերպով, բայց գտնէ մաքուր։ (Շատ քչերը կը լինեն, որ հաշուի համար մի հատ քսան կամ քսան և հինգ կոպէկանոց դիրք գտնեն)։ Բաւական է, որ մեր վաճառականի հաշուետուփարը վերջացաւ, ահա վեր է առնում ութ կամ տասը թերթ 7 №-ի հասարակ թուղթը, քառորդի դիրքով ծալում, կարում, և արդէն նրա նոր հաշուետուփարը պատրաստ է։ Եւ ահա թէ ինչպէս է նա վարվում այդ աղորմելի հաշուետուփարի հետ. մի քանի թերթեր յատկացնում է առնելի ապրանքի համար և սկսում է խառնիխուռն կերպով գրել «առայ այսքանի ապրանք, ես այսքանի» և այլն։ Մի քանի թերթեր յատկացնում է վճարելիք փողերի համար, նոյնպէս անկանոն կերպով «այսինչին վճարեցի այսքան» և այլն։ Մի քանի թերթեր յատկացնում է տուած նեսիաների համար և մի քանի թերթեր տան ծախսերի համար։ Իսկ եթէ պատահի, որ մեր վաճառականը իր չինությունը նորոգէ, դարձեալ այդ տետրակն է բանուորների և վարպետների վարձի հաշիւ պարունակողը։ Մի խօսքով մեր վաճառականի ամբողջ կարողությունն էլ և մտից հաշիները այդ տետրակումն են զետեղված, որի մէջ կը գտնէք մի քանի տեսակ ձեռքեր, մինչև անգամ այն աշակերտի ձեռքը (աշակերտ անուանում են այն գործակատարին, որը դեռ ևս ռոճիկ չէ ստանում), որը դեռ նոր է սովորել գրիչ ձեռք առնելը։ Ահա տարին լրացաւ, բայց մեր վաճառականը չէ ուզում հաշիւ տեսնել, (կան և բացառութիւն կազմողներ) որ գտնէ մի ամբողջ տարի անցնելուց յետոյ իմանայ թէ որքան ապրանք է ծախել և թէ որքան է աշխատել և գտնէ տեսնէ թէ արդեօք ապրանքից չէ պակասում, այն էլ այնպիսի դէպքերում, երբ գործակատարին բոլորովին ռոճիկ չէ տալիս, կամ տուածը շատ չընչին է։ Այսպէս վարվելով, գործակատարը որքան էլ որ ազնիւ և բարոյական լինի, դարձեալ ստիպված է խանութատէրից գողանալու, մանաւանդ երբ ընտանեկան հոգսերը նրան ճնշում են։

Թողնելով վաճառականի հաշուետուփարը, այժմ գանք նրա մի այլ յատուկ սովորության, որը պակաս վնաս չէ հասցնում նոյն իսկ իրան վաճառականին։

Դա է բաղադի մրցությունը. բաւական է որ բաղադներից մէկը տեսնէ մուշտարու ձեռքում մի քանի արշին չիթ, մուշտարուն քաշքշելով և չիթը ձեռքից առնելով կը սկսէ վատաբանել, չիթը պատռել, փտած յայտնել, յորդորել որ վերադարձնէ տիրոջը և իրանից առնէ, ասելով որ ես նրանից լաւ ապրանք կը տամ և պակասով։ Մուշտարին տանում է և ինչ անկարգություններով լցնում է. [illegible] Մեր բաղադը այն չիթը, որի արշինը ինքն առել է 15 կոպէկով, 15 կոպէկով էլ ծախում է մուշտարուն, ասելով որ «աջողս եմ տալիս, սրանից էլ օգուտ չեմ անի, միայն թէ իմ խօսքը առաջ կը տանեմ»։ Այսպիսի դէպքերում վնասվում են թէ առաջինը և թէ վերջինը. առաջինը վնասվեց, որովհետև իր չիթը կորատվեց, որ և առաջվայ գնով չի ծախվի, վերջինը դարձեալ վնասվեց, որովհետև 15-ով ծախեց, այն ինչ բացի այն որ 15-ով է առել, մի և նոյն ժամանակ տալիս է ժամանակով առած ապրանքին տոկոս, խանութին վարձ, գիլդիի փող և ուրիշ ծախսեր, որոնք արշինին մի կոպէկից աւելի ծախս կը նստեն։

Ուրեմն Երևանի վաճառականները ինչու են գանգատվում թէ առևտուր չունեն, օգուտ չը կայ, երբ իրանց առևտրի վնասողը իրանք են, երբ իրանց անկանոն հաշիներով, իրանց մուֆթայ գործակատարներով և իրանց անտեղի մրցությունով վնասում են թէ իրանց և թէ վաճառականությանը։

Եւ ինչու զարմանանք, որ նոր տարին սկսվելով, երբ խանութին նորից վարձ պէտք է տալ, երբ գիլդի պէտք է վեր առնել, և երբ մեր բաղաղը այնքան նաղդ փող չունի, որ այդ անհրաժեշտ պիտոյքները հոգայ, ստիպված վեր է առնում մի քանի կտոր յետ մնացած չիթերը և վաճառականությանն ասպարիզից դուրս գալիս, թողնելով իր ետեից ահագին պարտքեր։

Ց. Տ. Մ.

ՆԱՄԱԿ ՆՈՐ-ԲԱՅԱԶԵՏԻՑ

Փետրվարի 7-ին

Մեր գաւառի ներքին Աղիաման գիւղի Յովհաննէս քահանան մօտերումս ս. սինոդի կարգադրության հիման վրա կարգալոյծ եղաւ։ Ցիշեալ քահանայի յանցանքը, ի թիւս շատ ապօրինի գործերի, նաև առանց նախապէս թոյլտուության տաճար պակներ կատարելն էր։ Աղիամանին մերձակայ գիւղացիներից շատերն էին դիմում տէր-Յովհաննէսին իրանց որդոց պակը կատարել տալու համար, որովհետև ներկայումս տիրող դրամական սուղ միջոցների պատճառով, աղքատությունը ոչ մի միջոց չունի պսակող քահանային և ս. Աթոռին հասանելիքները անպակաս վճարել և ապա պսակելու հրաման ստանալ, ուստի 2—3 բուբլի վճարելով տէր-Յովհաննէսին, վերջինս առանց հրաման հարցնելու, անխտիր պսակում էր ցանկացողներին։ Պէտք է ասած, որ այս առաջին անգամն է ինչ Նոր-Բայազետի գաւառում քահանային կարգընկեց են անում։

Ս. սինոդի վերոգրեալ կարգադրությունը շատ մխիթարական է և շատ լաւ կը լինէր, եթէ գըլխաւորապէս ուշ դարձնէին մեր գաւառի բազմաթիւ անզրագէտ և ոչ մի քահանավայել արժանաւորություն չունեցող տէրտէրների վրա և այդպիսիներին էլ կարգալոյծ անելով, թողնէին միայն հասկացող և արժանաւոր քահանաներին և նորից ոչ ոքի չը ձեռնադրէին, մինչև իւրաքանչիւր քահանան գտնէ 200 տուն ծուխից պակաս չունենար, որպէս զի քահանայի դրությունը միշտ ապահոված մնար։ Իսկ նոր ձեռնադրվել ցանկացողներից գոնէ պահանջէր միջնակարգ ուսումնարանի դիպլոմ և բարի վարք։

Լրագրներից իմանում ենք, որ Կովկասի ամեն մի քաղաքում և գիւղում Զէյթունի հրկիզեալների օգտին փողեր հաւաքեցին. միմիայն Նոր-Բայազէտը անտարբեր մնաց այդ բարի գործում։ Բայց վերջերումս տեղիս քահանաները սկսեցին ստորագրության թերթեր շրջեցնել և փող հաւաքել. իսկ թէ ժողովարարությունից ինչքան դոյացաւ և ինչ եղաւ այդ գումարը,—յայտնի չէ, ինչպէս նա և անյայտ են Նոր-Բայազէտի հասարակական շատ հաշիւներ, օրինակ քաղաքային զրօսարանի և նոյն զրօսարանում շինած ռուսաց եկեղեցու հաշիւները, որոնց վրա քաղաքապատկան գումարից ծախսվել է 6—7 հազար բուբլի, և Սևանի լճի վրայի ազատարար նաւի (спасительная лодка) հաշիւը։ Նաւը ձեռք է բերված ժողովրդի նուիրաբերությամբ և ուրիշ շատ հաշիւներ, որոնց հրապարակ դուրս հանելը անչուտ հարկաւոր է հասարակության իւրաքանչիւր մի անդամի համար։ Զը մոռանամ ասելու, որ ամսիս 7-ին, սիրողների խումբը տալու է տեղիս ս. Հռիփսիմեան օրիորդաց ուսումնարանի դահլիճում մի ներկայացում Զէյթունի հրկիզեալների օգտին։ Խաղալու են Պէշիկթաշլեանի «Արշակ Ռ[illegible] [illegible]ՐԴՈՒԹՐՈՒՆԸ ԵՎ ԹՈՒՐՔ ՎՈՂԳՎԻԼԸ»։

Անցեալները մեր գաւառի Թիւրքաբնակ Մաղրայ անուանված մասից մի փախստական (գաչաղ) Թուրք Արդուլլայ փախցրեց իր հօրեղբօր աղջկան, որը սրանից վեց տարի առաջ նշանդրած էր մի ուրիշի վրա։ Բայց որովհետև նշանդրածը դեռ ևս չէր լրացրել աղջկայ հօր պահանջած գալանը, հետևաբար և չէր կարող ամուսնանալ մինչև գալանի լրիւ վճարելը։ Փախցրած աղջկայ համար պատմում են, որ շատ գեղեցիկ և գրաւիչ պատկեր է ունեցել։

Ս. Բ.

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

ԳԱՆՁԱԿԻՑ մեզ գրում են։ «Ամսիս 4-ին քաղաքիս յաջորդարանում կայացաւ Ս. Յովհաննէս եկեղեցու նոր գանձապետի ընտրությունը։ Ընտրողները հասարակությունից ջոկված պատգամաւորներ էին, որոնք թւով 16 մարդ պիտի լինէին, բայց երկուսը բացակայ էին։ Գանձապետ ընտրված է Մկրտիչ Նաբաթեանց, մի և նոյն ժամանակ ընտրված են և չորս հաշուատեսներ։ Պ. Նաբաթեանցի գանձապետի պաշտօնի համար ընտրությունը իրաւ մեծ անհեռատեսություն է, որովհետև տարվայ մեծագոյն ժամանակը քաղաքից դուրս գտնվելով և զբաղվելով թէ բագու և թէ ուրիշ քաղաքներում իր առևտրական խոշոր գործերով, նա ինչպէս կարող է եկեղեցու գանձապետություն անել, որպէս զի չը վնասվեն եկեղեցու շահերը։ Բացի սրանից ինչ հարկաւոր էր նոր մարդ ընտրել, քանի որ բոլոր ընտրողները իրանք խոստովանվում են նախկին գանձապետի շահաւէտ և խղճմտաւոր գործունէությունը յօգուտ եկեղեցու։»

—

ՀԻՆ-ՆԱԽԻՋԵՒԱՆԻՑ մեզ գրում են։ «Մեր քաղաքում հասարակաց կեանք ամենևին չը կայ, հին-նախիջևանցին անտարբեր է դէպի ամեն բան։ Ամեն տեղ հայերը հանգանակություններ են անում յօգուտ դէյթունցիների, իսկ մեզ մօտ մինչև անգամ կը ծաղրեն մի մարդուն, եթէ նա այդ նպատակով հանգանակություն անել կամենայ։ Ամեն տեղ թատրոնասէրների հայերէն ներկայացումներ են լինում, իսկ Հին-Նախիջևանում երբ սիրողների հայերէն ներկայացում է լինում, ինչպէս որ եղել է անցեալ տարվայ դեկտեմբերի 25-ին, ոչ թէ միայն զուտ արդիւնք չէ դոյանում ներկայացումից, այլ ներկայացնողները նոյն իսկ վնաս են կրում։ Ցիշեալ ներկայացումից 2 բուբլի 50 կոպէկ վնաս է եղել։»

—

ԵՐԵՒԱՆԻՑ մեզ գրում են։ «Փետրվարի 3-ին երեք հոգի Թուրքեր, նստելով ֆայէտոն, հրամայում են ձիավարին քշել Շահար կոչված Թաղի Թուրքերի մասը։ Այդտեղ հասնելուն պէս այդ Թուրքերը յարձակվում են հայ ձիավարի վրա, սպանում են նրան և անհետանում են։ Զարագործներից միայն մէկը գտնված է արդէն։ Դատաստանական քննությունն է նշանակված եղելության մասին։»

—

«Հիւսիսային գործակալությունը» մեզ հեռագրում է ԻՐԲԻՏԻՑ, փետրվարի 8-ից, որ այդ քաղաքում բացված տօնավաճառում բերված ապրանքների քանակությունը անցեալ տարվանից պակաս է, բայց առևտուրը լաւ է գնում, մանաւանդ լաւ են ծախվում բրդեայ և ասիական ապրանքները։ Թէյի վրա գինը դեռ չէ որոշվել։ Շաքարը միջակ կերպով է առնվում։ Կաշին կիսով չափ պակաս է բերված, քան թէ նախընթաց տօնավաճառներում։ Կաշու վրա գները 8%-ից մինչև 10% աւելի բարձր են քան թէ Իշիմեան տօնավաճառում այդ ապրանքի վրա եղած գները։ Կաշին ծախվել է 4 բուբլի 60 կոպէկից մինչև 5 բուբլի պուդը։ Գլխաւորապէս ծախվում է մաղեղէն ապրանքը։ Առհասարակ տօնավաճառի հետևանքը, ինչպէս սպասում են, բարեյաջող է լինելու։

—

ԳՕՐՈՒՄ, ինչպէս մեզ գրում են, կազմվել է Տէր-Սահակեանցից աւագ քահանայի նախաձեռնությամբ մի մասնաժողով, յօգուտ Զէյթունի հրկիզեալների հանգանակություն անելու նպատակով, և բաւական գումար է հաւաքել արդէն այդ նպատակով։ Տէր-հայրը, ինչպէս միշտ, մեծ եռանդով է գործում։

—

Եթէ հաւատանք վրաց «Իվերիա» լրագրին, Ախալցխայի և Ախալքալաքի գաւառների կալուածատէրերը մտադիր են մի բանկ հիմնել, որից կարելի լինի փող վերցնել՝ երաշխաւորներ ներկայացնելով, վարելահողեր և այլ կալուածներ ու թանգագին իրեղէններ գրաւ դնելով։ Մի խօսքով այդ բանկը կը լինի առևտրական և կալուածական բանկի նման մի հաստատություն։ Հիմնադիրները արդէն ձեռնամուխ են եղել գործին։

—

Ֆինանսների մինիստրության մէջ ներկայումս քննվում է մի նախագիծ, որի նպատակն է նպաստել Ռուսաստանում ծխախոտի արդիւնաբերության զարգանալուն։

—

Փորձը արդէն ապացուցել է, որ Ղրիմում կարելի է բուսցնել և աճեցնել կաֆէի ծառը։ Այդ նպատակով եղած փորձերը ընդհանրապէս աջողվել են։ Այդ բանը ի նկատի ունենալով, ինչպէս հաղորդում են Պետերբուրգի լրագիրները, կազմված է մի ընկերություն, որի նպատակն է Ղրիմում կաֆէի ահագին պլանտացիաներ զարգացնել։

—

Զորեքշաբթի, ռուսաց դրամատիկական խումբը, ի նպաստ պ. Ֆօրկատիի ներկայացրեց Վ. Ալեքսանդրովի ձեռքով ֆրանսերէնից փոխադրած «Путанная Головушка» կոմէդիա-ֆարսը։ Պիէսայի ամբողջ գործողությունը պտտվում է հերոսուհու շուրջը, որի շնորհով պիէսայի մէջ գործող տնձինք ընկնում են անելանելի և ծիծաղելի դրության մէջ։ Խաղը ընդհանրապէս բաւարար անցաւ. պ. Ֆօրկատիին տրվեցան մի պսակ և միքանի թանգագին իրեր։

—

Երկուշաբթի, փետրվարի 15-ին, ինչպէս լսում ենք, քաղաքային թատրոնում կը կայանայ ա.

Սօղեֆովիչի բենեֆիսը։ Կը ներկայացվի Բիզէի «Կարմէն» օպերան, որի մէջ հերոսուհու դերը, ինչպէս յայտնի է, չնորհալի կերպով կատարում է տիկինը։

—

ՎԵՐԻՆ-ԱԳՈՒԼԻՍԻՑ մեզ գրում են. «Բարեկենդանի մօտենալով, հայկական սովորութեան համաձայն, նշանդրութիւնները և պսակները այստեղ ղգալի կերպով շատացել են։ Իրանց կեանքի արտաքին կողմերով միայն լուսաւորված ազուլեցիները, տարաբաղդաբար շատ թեթև են նայում ամուսնութեան վրա, և ղեկավարվում են գլխաւորապէս այն գաղափարներով, ինչով որ ղեկավարվում էին նրանց հայրերը և պապերը։ Դուք տեսնում էք, օրինակ, որ մի 40 տարեկան մարդ ամուսնանում է մի 14 կամ 15 տարեկան աղջկայ հետ. դուք տեսնում էք թէ ինչպէս հայրը՝ յափշտակվելով աղջկայ օժիտից, նշանում է իր որդուն հարուստ աղջկայ հետ, մինչդեռ ոչ աղջիկն է տղային տեսել, և ոչ էլ տղան է աղջկանը տեսել. վերջապէս այդ բոլոր ամուսնութիւնների մէջ գլխաւոր պայմանը ոչ թէ աղատ ընտրութիւնն է, այլ այն թէ ում աղջիկն է հարմարացուն, ում թոռն է փեսացուն, և ինչքան փող ունի։ Այդ բոլորը դուցէ ներելի է յետընկած գիւղերում, բայց ներելի չէ ազուլեցիներին, որոնք կարծում են որ կարող են պարծենալ իրանց լուսաւորված կենցաղավարութեամբ։»

—

ԲԱԳՈՒԻ Մարդասիրական ընկերութեան վերջին ընդհանուր ժողովի մէջ եղած վիճաբանութիւններից և ժողովում արած զեկուցումներից երևաց, որ Ելիսավետպոլի նահանգում գոյութիւն ունեցող Թարգմանչաց վանքում, որ գտնվում է պ. Ներսէս Տէր-Ներսէսեանի հովանաւորութեան տակ, և որի համար պարոնը տարիներով ամեն տեղից դումարներ է հանգանակում, հաւատացնելով որ այդ վանքում դպրոց կայ, և մինչև անդամ այդ դպրոցի օգտին տարեկան մի յայտնի գումար է ստանում Բագուի Մարդասիրական ընկերութիւնից,—ամենևին դպրոց չը կայ և երբէք էլ չէ եղել։ Այդ ինչ է նշանակում։ Մենք էլ հատացած էինք որ Թարգմանչաց վանքում դպրոց կայ, իսկ այժմ յայտնվում է որ այդ վանքում ոչ ուսումնարան կայ, դուցէ ոչ էլ վանահայր։ Դեռ ևս անցեալ տարվայ դեկտեմբերի 7-ից պ. Տէր-Ներսիսեան Գանձակից մեզ նամակ է գրում, գրվելով «Մշակին» և այդ նամակում աւելացնում է «խոնարհաբար խնդրում եմ չը մոռանալ և մեր աղքատիկ ս. Թարգմանչաց վանական ուսումնարանը և եթէ լինէին «Մշակի» նուիրողներ, մի օրինակ ևս նուիրեցէք յիշեալ վանական ուսումնարանին. այդ մի օրինակը կը կարդան այցելուներից շատերը և աշակերտները։» Այժմ, ինչպէս պարզեց Մարդասիրական ընկ. ընդհանուր ժողովը, ս. Թարգմանչաց վանքի թէ ուսումնարանը և թէ ուսումնարանի աշակերտները միայն պ. Ներսէս Տէր-Ներսէսեանի երևակայութեան մէջ գոյութիւն ունէին։

—

«Աղբիւր» մանկավարժական ամսագրի այս տարվայ № 2-ի մէջ իր վրա առանձին ուշադրութիւն է դարձնում իր դեղեցիկ և սահուն ոճով Գ. Թաղէոսեանի «Նաւակ» վերնագրով սիրուն և նկարչական բանաստեղծութիւնը։

—

ԱՍՏՐԱԽԱՆԻՑ մեզ գրում են։ «Վաղուց արդէն գրագրութիւն էր եղած Կաղանի ուսումնական շրջանի հոգաբարձուի հետ Աստրախանի արական և իգական արքունական դպրոցներում հայոց լեզուն և հայ կրօնը հայերէն լեզուով աւանդելու վերաբերմամբ։ Ցայսմանէ չէ ինչ պատճառով այդ գրագրութիւնը առանց հետևանքի էր մնացել։ Այդ գործը շարունակել է նոր առաջնորդ Սուրէնեան և աջողութեամբ է վերջացրել։ Կաղանի ուսումնական հոգաբարձութիւնը թոյլ է տալիս հայոց լեզուն և հայ կրօնը հայերէն աւանդել դիմնաղիներում միայն այն պայմանով, որ այդ գործը նիւթականապէս ապահոված լինի. կամ պէտք է ունենալ դրամագլուխ որի տոկոսով պահվեն յիշեալ առարկաների ուսուցիչները և կամ այդ նպատակի համար ժողովուրդը պարտաւորվի տարուց տարի վճարել։ Պէտք է վարձվեն երկու կամ երեք ուսուցիչներ. դրանց համար նըշանակված է ամենաքիչը 600 ր.։ Հարցի վերջին մասը վճռելու համար իր ժամանակին քաղաքի հասարակութիւնը՝ առաջնորդի հրաւէրով ժողով կազմեց և հարցը վճռվեց այսպէս. «Եկեղեցական դրամներից տարեկան 600 ր. տալ ուսուցիչներին ռոճիկ 5 տարի, իսկ այս ժամանակի ընթացքում ժողովուրդը բարոյապէս պարտաւորվում է այդ գործի համար կամաւոր հանգանակութեամբ մինչև 12,000 ր. փող հաւաքել և յանձնել եկեղեցուն իբրև դրամագլուխ, որի տոկոսով պահվեն ուսուցիչները։ 600 ր. եկեղեցական դումարներից վեր առնելու համար՝ դարձեալ հարկաւոր է հոգևոր բարձր կառավարութիւնից թոյլտուութիւն ստանալ։ Ցոյս կայ, որ այդ թոյլտուութիւնը ստացվի, իսկ հակառակ դէպքում երևի թէ այդ գումարը փոխարինաբար կառնվի եկեղեցուց։ Այս հարցը մի ամսից աւելի է, որ վճռված է՝ ընդհանուր գոհունակութիւն պատճառելով։»

—

Ցօղուա Զէյթունի հրկիզեալների ստացանք Բաղուից, պ. Կիլիկեանի ձեռքով 18 ռուբլի, որը հանգանակել են իրանց մէջ պ. Շահգէդանեանցի գործիքարանում աշխատողներից եօթ հոգի։ Խմբագրատանը եղած նախկին 221 ր. 86 կ. գումարի հետ կը լինի ուրեմն 239 ր. 86 կոպ., որ այժմ ունենք մեզ մօտ ցօղուա զէյթունցիների։

—

Այսօր կալուածական բանկի թատրոնում ռուսաց խումբը տալու է մի ներկայացում յօգուտ Ալէքսանդրեան մանկական ազաստարանի։ Կը խաղացվի «Քոյր Թերէզա» դրաման։ Պէտք է ենթադրել որ թատրոնը լի կը լինի։

—

Ծովային մինիստրութիւնը, ինչպէս հաղորդում են Պետերբուրգի լրագիրները, մշակում է նաւահանգստական քաղաքներում բանուորների համար փոխատու-ինայողական դրամարկղներ հիմնելու հարցը։ Կանոնադրութեան մշակելը յանձնված է մի առանձին յանձնաժողովի։

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԹԻՒՐՔԱՑ ԿԱՌԱՎԱՐՈՒԹԵԱՆ ՇՐՋԱԲԵՐԱԿԱՆԸ

—

Յունվարի 28-ից Կ. Պոլսից գրված մի թղթակցութեան մէջ, որը տպված է մի ռուսաց լրագրում, կարդում ենք, ի միջի այլոց, հետևեալը. «Բ. Դուռը շարունակում է զբաղվել հայոց հարցով։ Իրան դիմողներին թիւրքաց արտաքին գործերի մինիստրը հաւատացնում էր, որ ամեն բան վերջացած է, և որ Իլդիզ պալատի մէջ կազմված յանձնաժողովը, որին յանձնված է քննել գործը, արդէն արձակված է։ Բ. Դուռը աշխատում է հաւատացնել Եւրոպային, որ Հայաստանում տիրում է կատարեալ հանգստութիւն։ Բ. Դուռը այդ նպատակով ուղարկեց պետութիւններին մի շրջաբերական, որով յայտնում է, թէ անհրաժեշտ էր քննութիւններ անել՝ փոքր Ասիայի մի քանի նահանգների իսկական դրութիւնը իմանալու համար. բայց որովհետև այդ քննութիւնները ցոյց տուեցին, որ հայերը երբէք ոչինչ դիտումներ չեն ունեցել օսմանեան կայսրութեան դէմ, ուստի կայսերական կառավարութիւնը հանգստացաւ և յիշեալ նպատակի համար կազմված յանձնաժողովն էլ արդէն լուծվեցաւ։ Բայց, աւելացնում է շրջաբերականը, արտասահմանում ապրող հայերը մասնաժողովներ են կազմում Հայաստանի մէջ անկարգութիւններ առաջ բերելու համար, և այդ նպատակով գործ են դնում թէ զրգռիչ յօդուածներ և թէ ուրիշ միջոցներ։ Բայց հայոց պատրիարքը պահարակում է այդ չարամիտ մտադրութիւնները, և յայտարարեց, որ հայերը գոհ են կառավարութիւնից։ Ճշմարիտ է, հայոց պատրիարքը ուղարկեց մի շրջաբերական բոլոր հայոց առաջնորդներին, հրաւիրելով նրանց նշանակութիւն չը տալ Եւրոպայում՝ թիւրքաց կառավարութեան դէմ տպվող հրատարակութիւններին։ Սկզբում պատրիարքը չէր ուզում ուղարկել այդ շրջաբերականը, բայց մեծ-վիզիրը պնդեց այդ բանի վրա, խոստանալով վերջացնել այն բոլոր գործերը, որոնք դեռ ևս մնում են անլուծելի պատրիարքի և Բ. Դրան մէջ, եթէ պատրիարքը կը պաշտպանէ թիւրքաց կառավարութիւնը»։

ՄԱՄՈՒԼԻ ՊԱՏԱՍԽԱՆԸ ԲԻՍՄԱՐԿԻՆ

—

Մենք արդէն հաղորդեցինք իշխան Բիսմարկի «օրվայ չարիք» դարձած ճառի այն մասը, որը վերաբերում է գլխաւորապէս ռուսաց մամուլին և մասամբ էլ ֆրանսիական մամուլին։ Մենք դեռ այն յօդուածում ակնարկեցինք, որ երկաթէ կանցլերը «յարմար առիթ է գտել իր վրէժը առնել ա ռ հ ա ս ա ր ա կ մամուլից, քանի որ այդ «կանցլերական բարձրութիւնից» արհամարհված մամուլը շատ անգամ և շատ խնդիրներում ցոյց է տուել Բիսմարկի քաղաքականութեան անհիմն լինելը և վնասակարութիւնը։ Մամուլին ուղղած Բիսմարկի նկատողութիւններին եւրոպական շատ լրագիրներ արդէն պատասխանեցին, բողոքելով նրա խիստ յարձակմունքների դէմ։ Լրագրութեան այդ պատասխանի գլխաւոր հիմքը մի և նոյնն է, այնպէս որ մենք կը բաւականանանք առաջ բերելով անգլիական մի նշանաւոր պուբլիցիստի կարծիքը իշխան Բիսմարկի ճառի առիթով. «Սխալ կը լինէր ենթադրել, որ իշխան Բիսմարկ արհամարհանքով է վերաբերվում դէպի մամուլը այն պատճառով միայն, որ նա ռուսաց մամուլի յայտնած կարծիքը միայն թուղթ մրոտել է համարում։ Գերմանական կանցլերը դրանով միայն կամենում է ասել, որ հրապարակախօսութիւնը կախված է հրապարակախօսից։ Եթէ մի «անհատ» իր յօդուածները լոյս հանելով, գիտէ թէ ինչ է ասում և բարեիղճութեամբ է արտայայտում իր մտքերը ընթերցողների մի շրջանի համար, որը բաժանում է այդ մտքերը, այն ժամանակ այդ յօդուածները նոյնքան կարող են թուղթ մրոտել համարվել, որքան կարելի է օդի շարժում համարել այնպիսի պետական մարդու պաշտօնական ճառը, որպիսին իշխան Բիսմարկն է։ Ամեն մի խօսք օդի շարժումն է, բայց չը պէտք է մոռանալ, որ շատ անդամ մի խօսքից է կախված ամբողջ ժողովրդի վիճակը։ Տպագրական և բանաւոր խօսքի մէջ շատ նմանութիւններ կան։ Թ ու ղ թ մ ր ո տ ո ղ ն ե ր ը նոյնքան արժանի են յարգանքի, որքան և դ ա տ ա ր կ ա խ օ ս ո ղ ն ե ր ը։ Եթէ հարիւրաւոր հռետորների մէջ մի Բիսմարկ կայ, ուստի զարմանալի չէ, որ պուբլիցիստների մէջ էլ հարիւրաւոր թուղթ մրոտողներից միայն մէկն է կարողանում զօրեղ ազդեցութիւն ունենալ և առաջնորդ լինել իր յօդուածներով։ Ճշմարիտ պուբլիցիստը կարողանում է մտքերի նոյնութիւն մտցնել ընթերցողների մէջ, և այդպիսով առաջ բերելով ձգտումների միութիւն, առաջ է մղում դէպի ընդհանուր նպատակը։ Այդ դէպքում պուբլիցիստը արդէն միայնակ անձնաւորութիւն չէ և նրա լրագիրը չէ կարող համարվել իբրև մի մրոտած թուղթ, ինչպէս որ իշխան Բիսմարկի ճառն էլ չէ կարող համարվել լոկ օդի շարժումնք»։

Չէ կարելի չը խոստովանվել, որ այդ մտքերը բաւական արդարացի պատասխան են իշխան Բիսմարկին, որը գուցէ տեսնելով համոզմունքից, որ և է ձգտումից և շնորհից զուրկ հարիւրաւոր հրապարակախօս համարվողներին, որոնք իրանց անմիտ և աննպատակ ընթացքով և թուղթ մրոտելով բաւական վնասել են մամուլի անուանը,—այդպիսի անտեղի կարծիք է յայտնում ընդհանրապէս մամուլի մասին։ Մի բան միայն շատ զարմանալի է. չէ որ նոյն Բիսմարկ շատ անդամ փորձել է կաշառել զանազան լրագիրներին՝ իր նպատակները իրագործելու համար։ Միթէ այդ լրագիրները այն ժամանակ թուղթ մրոտելով չէին զբաղված.....

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

—Իրլանդական նշանաւոր հարցը, ինչպէս երևում է, նորից հրապարակ պէտք է գայ անգլիական հանրայնքների ժողովում, մի առ ժամանակ լռութեան մէջ մնալուց յետոյ։ Իրլանդական պետական քարտուղարը յայտնեց, որ հողային չարագործութիւնները Իրլանդիայում քչացել են, և այդ բանը վերագրեց անգլիական կառավարութեան ձեռք ուռած խիստ միջոցներին։ Պարնէլ պէտք է ներկայացնէ ժողովին մի առաջարկութիւն, որով խնդրում է յանդիմանութիւն անել մինիստրութեանը՝ նրա ձեռք առած խիստ միջոցների պատճառով, յայտնելով դրա հետ միասին՝ որ չարագործութիւնների քչանալը հողային ըէֆորմների հետևանքն է միայն։

—Բերլինից գրում են, որ դինուորագրական նոր օրէնքը հրատարակվեցաւ և անմիջապէս գործադրութեան մէջ մտաւ։

—Գերմանական թագաժառանգի հիւանդութեան մասին երկդիմի լուրեր են դալիս. ինչպէս երևում է, Բերլինում աւելի լաւ են համարում հրապարակ չը հանել թագաժառանգի հիւանդութեան ինչ դրութեան մէջ լինելը։

—Աւստրիական մի քանի լրագիրներ հաղորդում են, որ իբրև թէ պետութիւնների մէջ բանակցութիւններ են սկսված Բոլգարիա յատուկ կոմիսարներ ուղարկելու համար, որոնց գալուց յետոյ՝ անմիջապէս թիւրքաց զորքերը կը մտնեն Բոլգարիա։

—Փարիզից հեռագրում են հետևեալը։ «Եպիսկոպոս Ֆրէպպել պատգամաւորների ժողովում խօսելով Ֆրանսիայի և Գերմանիայի յարաբերութիւնների մասին, այն միտքը յայտնեց, որ Ֆրանսիան կարող է Գերմանիայից առնել Էլզաս-Լոթարինգիան, վճարելով դրա համար փող, և դրանով միայն կարելի է դրական հաշտութիւն կայացնել Գերմանիայի հետ։»

—«Արևելքի» մէջ կարդում ենք։ «Փետրվարի 1-ին Կրօնական ժողովը ի նիստ գումարեցաւ, ընդառնապետութեամբ Խրիմեան Սրբազանի։ Ս. Պատրիարքը Հայրն հիւանդ լինելով չը կրցաւ նախագահել նստին։ Ժողովը նկատողութեան առաւ Կեսարիոյ առաջնորդ Արժ. Տրդատ վարդապետի մէկ գիրն, որով կը ծանուցանէր թէ Կեսարիոյ և թէմօրէից մէջ բողոքականաց երերական աղանդին պատկանող խումբ մը մարդիկ երևան ելած են, որոց մէջ քահանայ ձևացող անձ մ'ալ կայ, ինչպէս նաև կոյս աղջիկ մը։ Այս անձինք, որք «Սէր» անուամբ միութիւն մը կազմած են, տեսիլքներ կը տեսնեն, գուշակութիւններ կընեն, հիւանդներ կը բուժեն և այլ գործիր կը տեսնեն ի դայթակղութիւն ժողովրդեան։ Արժ. Առաջնորդն յայտարարելէ յետոյ թէ տեղական կառավարութեան միջոցաւ այս մարդիկն հեռացնել տուած է Կեսարիայէն, կը խնդրէ ծանուցանել զայս ի գիտութիւն ժողովրդեան։ Ժողովն ըստ այնմ որոշեց հարկ եղածը ծանուցանել ի զգուշութիւն ժողովրդեան։ Կեսարիոյ թեմերէն Ֆերէսեղի մէկ քանի աղգայինք արդէն նախընթաց օր Ամեն. Ս. Պատրիարքը Հօր դիմած և խնդրած էին այս մարդոց նկատմամբ պէտք եղածն ի գործ դնել և Ն. Ամենապատուութիւնն այս առթիւ թագրիր մը ուղղեց կայս. կառավարութեան։ Ժողովն յետոյ խառն նիստ մունեցաւ Առաջնորդական վիճակաց վերակազմութեան յանձնաժողովոյ հետ և ամբողջութեամբ ընդունելով պատրաստուած տեղեկագիրն որոշեց ներկայել նոյն խառն ժողովոյ վաղուան նստին»։

ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ

Մենք մի անգամ յիշել ենք «Մշակի» մէջ Փարիզում ապրող մի երիտասարդ հայ, Ժան-Բրուսալիի յօդուածների մասին Հայաստանի և հայերի վերաբերմամբ, որոնք տպվում էին Ֆրանսիական լրագիրներում և ամսագիրներում։ Այժմ պ. Բրուսալի, ինչպէս երևում է Ֆրանսիական և բէլգիական լրագիրներից, պատում է թէ Ֆրանսիայի և թէ Բէլգիայի այլ և այլ քաղաքներում և ծանօթացնում է օտարազգի հասարակութիւնը Հայաստանի և հայերի հետ, ամեն տեղ հրապարակական դասախօսութիւններ կարդալով Ֆրանսերէն լեզուով։ Բէլգիական «Indépendance Belge» այս տարվայ № 36-ի մէջ տպված էր մի բաւական ընդարձակ և համակրական յօդուած պ. Բրուսալիի դասախօսութեան մասին, որ նա կարդացել է այս օրերս Բրիւսէլի Աշխարհագրական ընկերութեան մէջ և որի նիւթն էր «Հայաստանը և հայերը»։ Դասախօսը ծանօթացրեց իր ունկնդիրներին Հայաստանի պատմութեան և աշխարհագրութեան հետ, հայերի բնաւորութեան և ընդունակութիւնների հետ և վերջը նկարագրեց թիւրքաց հայերի այժմեան անմխիթար վիճակը, հրաւիրելով այդ վիճակի վրա Եւրոպայի ուշադրութիւնը։ «Indépendance Belge» լրագիրը մեծ զովասանքով է խօսում պ. Բրուսալիի այդ դասախօսութեան մասին։

*
* *

Մի գեղեցիկ օրիորդ ժպտալով ասում է մի երիտասարդ բժիշկին.

—Ես ձեզ ամենևին չեմ հաւատում, սիրելի բժշկապետ, ես մինչև անդամ իմ ձեռքի ամենափոքրիկ մատս չէի յանձնի ձեզ...

—Իսկ ձեր ամբողջ ձեռքը չէ՞ք յանձնի ինձ, նազելի օրիորդ....

—Այդ մասին....խօսեցէք մօրս հետ, եղաւ պատասխանը։

„ՄՇԱԿԻ" ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՀԻՒՍԻՍԱՅԻՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԻՑ

—

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 10 փետրվարի։ Լուրերին նայելով, պատերազմական մինիստրութիւնը նախա-

դիծ է պատրաստում՝ մի քանի աւելի նշանաւոր բերդերում բերդային ինտենդանտների պաշտօն հաստատելու համար։ Այսօր ռուսաց արժէքաւոր թղթերի գնի Բերլինում սովորականից դուրս, ընկնելու պատճառով, մուրհակների կուրսը Պետերբուրգի բօրսայում զգալի կերպով իջաւ. այսօր 10 ֆունտ ստերլինգին վճարում էին 120 ր. 80 կօպ., 100 գերմանական մարկին—59 ր. 30 կ., 100 ֆրանկին՝—47 ր. 75 կ., նոր կարած պօլուիմպէրիալին վճարում էին 9 ր. 55 կ. բոլոր երկաթուղային ակցիաները գնի կողմից անապասելի կերպով ընկան. իսկ պետական արժէքաւոր թղթերը պահպանեցին ամուր տրամադրութիւն։ Սենատը, քննելով Շուշու գաւառական անտառապետ Զիչինաձէի, կօնդուկտօր Բէգլիարովի և անտառապահ Քեարամօվի գանգատները, որոնք Թիֆլիսի դատաստանական պալատի կողմից մեղաւոր են ճանաչված ծառայութեան վերաբերեալ կեղծումների և անտառների պահպանութեան վերաբերեալ զեղծումների մէջ,—վճռեց՝ 1) դատաստանական պալատի վճիռը ջնջել և 2) բոլոր մեղադրվողներին արդարացրած համարել։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 10 փետրվարի։ Երէկ այստեղ հասաւ Պետերբուրգի գերմանական նախկին զինուորական լիազօրը,—այժմ Բերլինի նահանգապետ,—գեներալ Վէրդէր։ Գեներալը իջաւ Զմեռային պալատում։ Ֆինլանդական մաքսային նոր 1887 թվի դեկտեմբերի 30-ի տարիքը շուտով կը հրատարակվի «Օրէնսդրական հաւաքածուի» մէջ և գործադրութեան մէջ կը մտնի մարտի 1-ից։

ԲԵՐԼԻՆ, 10 փետրվարի։ Երէկ կոմս Հերբերտ Բիսմարկ ճաշ տուեց ի պատիւ կոմս Շուվալովի և նրա ամուսնու։ Շաբաթ օր Կալուգեան գնդի պատգամաւորութեան պատին տուած ճաշի ժամանակ՝ Վիլհելմ կայսրը կենաց առաջարկեց ի պատիւ Նորին Մեծութեան ռուսաց կայսրի, յիշեց Ալէքսանդր I կայսրի մասին, որը շնորհել է Վիլհելմ կայսրին Կալուգեան գնդի շէֆի տիտղոսը, մատնանիշ արեց բարեկամութեան վրա Նիկողայոս կայսրի, Ալէքսանդր II կայսրի, և այժմեան կայսրի հետ, և վերջումն էլ յայտնեց իր երախտագիտութիւնը Կալուգեան ամբողջ գնդին՝ նրա քաջութեան և գերազանց ծառայութեան համար։ Բօլգարական հարցի առիթով ըսկած բանակցութիւնները առաջ են գնում. Գերմանիան եռանդով խորհուրդ է տալիս պետութիւններին համաձայնվել Ռուսաստանի ցանկութեան հետ։ Իտալիան, ինչպէս լսվում է, համաձայնվել է Գերմանիայի հայացքների հետ, որի կողմը սկսել է թեքվել և Անգլիան։ Վիէննայի գերմանական դեսպանին յանձնված է հասկացնել Աւստրիային, որ եւրոպական խաղաղութեան շահերը պահանջում են, որ Բ. Դրանը, իբրև Բօլգարիայի վրա գերիշխանութիւն ունեցող պետութեան, առաջարկվի բոլոր պետութիւնների կողմից՝ համարել Կօբուրգի պրինցի ընտրութիւնը ապօրինի։ Լուրերին նայելով Բերլինում և Վիէննայում արտայայտվում է սաստիկ դժգոհութիւն՝ բօլգարական հարցի առիթով շարունակվող տարաձայնութիւնների համար։ «Börsen Courier» լրագիրը, որը ռուսաց արժէթղթերի գնի այս օրվայ ընկնելը վերագրում է դէպի Ռուսաստանի պետական կրէդիտը ունեցած կասկածանքներին, ենթադրում է, որ միայն այժմ տեղի ունեցող որ և է որոշ ցոյց կարող է այդ կասկածանքներին դէմ առնել և դրա սկիզբը, ասում է լրագիրը,—արդէն դրված է Բօլգարիայի վերաբերեալ առաջադրութիւններով։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 11 փետրվարի։ Այսօր սկսեց իր գործողութիւնները «Ռուսաց առևտրական և կոմիսիական բանկը»։

Կ. ՊՕԼԻՍ, 11 փետրվարի։ Գերմանական դեսպան Ֆօն-Բաղօվից հեռագրով հրահանգ է ստացել, որով առաջադրվում է նրան պաշտպանել Բ. Դրան առաջ այն դիպլոմատիական միջոցները, որոնք ձեռք կառնվեն Ռուսաստանի կողմից, որպէս զի համաձայնեցնեն Թիւրքաց կառավարութեանը յայտարարելու Կօբուրգեան պրինցի Բօլգարիայում իշխելու ապօրինութիւնը։ Անկասկածելի է, որ նոյնպիսի պաշտպանութիւն կը լինի և Ֆրանսիայի կողմից։

ԲԵՐԼԻՆ, 11 փետրվարի։ Այստեղ համոզում են, որ բանակցութիւնների առաջին ֆազիսը Ռուսաստանին գոհունակութիւն պատճառող կերպարանքով կը վերջանայ։ «Հիւսիսային-գերմանական լրագիրը» այն համոզմունքն է յայտնում, որ Բ. Դուռը ապօրինի կը յայտնի Կօբուրգեան պրինցի իշխանութիւնը նոյն իսկ առանց միւս պետութիւնների աջակցութեան։

ՎԻԷՆՆԱ, 11 փետրվարի։ Կիսապաշտօնական մամուլը գոհ չէ Ռուսաստանի կողմից առաջ մըղած առաջադրութիւններով, բայց ամեն բան կախված է նրանից, թէ ինչպէս կը նայի գործի վրա իշխան Բիսմարկ։ Բոլորից երևում է, որ նա կը պնդի այստեղ ռուսաց առաջարկութիւնները ընդունելու վրա։

ԼՕՆԴՕՆ, 11 փետրվարի։ Համայնքների ժողովում արտաքին գործերի մինիստրի օգնական Ֆիրգիւսսէն կրկին անգամ ասեց, որ Անգլիան ոչինչ պարտաւորութիւն չէ յանձն առել՝ միջազգային ընդհարումների դէպքում, և դրա հետ միասին ակնարկեց Ֆրանսիայի և Անգլիայի յարաբերութիւնների բարեկամական բնաւորութեան վրա։

ԲՐԻՍՍԷԼ, 11 փետրվարի։ Բելգիական բանկը իջեցրեց դիսկօնտը 3%-ից մինչև 2½%։

ՓԱՐԻԶ, 12 փետրվարի։ Վիլսօնի գործի քննութիւնը վերջացաւ։ Դատավճիռը կը յայտնվի մի շաբաթից յետոյ։ Գաղտնի դրամագլուխների հարցի առիթով մինիստրութիւնը յարուցեց իր գոյութեան խնդիրը։

Խմբագիր-հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ԲԵՆԵԴԻԿՏԵԱՆ ԳԵՐԱՊԱՏԻՒ ՀԱՅՐԵՐԻ ԷԼԻԿՍԻՐԸ

ՍՈՒԼԻԱԿ (GIRONDE) ԱԲԲԱԹՈՒԹԻՒՆԻՑ

Այդ էլիկսիրը հնարել է **1373** թուին վանահայր ՊԵՏՐՈՍ ԲՈՒՐՍՕ։

Այդ էլիկսիրի մի քանի կաթիլների ամենօրեայ գործածութիւնը պահպանում է ատամները փչանալուց, տալիս է նրանց սպիտակութիւն, ամրացնում է լինդերը և թարմացնում է բերանը։

Բացի էլիկսիրից ԲԵՆԵԴԻԿՏԵԱՆ հայրերը պատրաստում են դարձեալ ԱՏԱՄՆԱՓՕՇԻ և ՊԱՍՏԱ ատամներ սրբելու համար, որոնք նմանապէս կարելի է ձեռք բերել ամեն փոքր ի շատէ նշանաւոր դեղատներում, ինչպէս և դեղատան ապրանքների պահեստներում ու պարֆիւմերական մագազիններում։

ԳԼԽԱՒՈՐ ԱԳԵՆՏ SEGUIN, BORDEAUX, rue CROIX de SEGUEY, №106.

1—30 (Շ.)

BATEAUX A VAPEUR FRANCAIS N. PAQUET ET COM.

ՖՐԱՆՍԻԱԿԱՆ ՆԱՒԱԳՆԱՑՈՒԹԵԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

Ն. ՊԱԿԷ ԵՒ ԸՆԿ.

կանոնաւոր և ուղղակի երթևեկութիւն ՄԱՐՍԷԼԻ և ԲԱԹՈՒՄԻ մէջ և փոխադարձ.

Հինգշաբթի, փետրվարի 18-ին, ԱՆԱՏՕԼԻԱ (ANATOLIE) շոգենաւը, նաւապետ ԲՕՇԷԼ (BOSCHEL) դուրս կը գնայ Բաթումից դէպի Տրապիզոն, Օրդու, Սամսօն, կ. Պոլիս և Մարսէյլ։ Տեղեկութիւնների մասին պէտք է դիմել ընկերութեան գործակալներին. Բաթումում ԼէմՀօղլուի տան, Նաբերէժնայա, և Թիֆլիսում պ. ԲէնՀին, նախկին Արծրունի գալլերէում, № 103. 3—4

ԲԺՇԿԱՊԵՏ ԲԷՆԿԼԵՎՍԿԻԻ

Բժշկական ընդունարանը։ Հիւանդները ընդունվում են ամեն օր 9-ից մինչև 11 ժամ առաւօտեան և 4-ից մինչև 6 ժամ երեկոյեան. սիֆիլիսի, կոկորդային, քթային, ականջի և ատամի ցաւերի բժշկութիւնը, պլօմբելը և ատամներ դնելը (ասիստէնտ ատամնաբոյժ Սօբօլէվ)։ Ատամի ցաւով հիւանդների ընդունելութիւնը 9-ից մինչև 7 ժամ։ Գօլովինսկի պրոսպէկտ, տուն նախկին Բէլոյ № 5։

4—10

ԻՍԿԱԿԱՆ ԳԱՆՁ

է կազմում այն դժբաղդների համար, որոնք զոհ են եղել անբարոյականութեան, բժշկապետ ՐԷՏԱՈՒԻ գիրքը

«ԻՆԲՈՆԱՊԱՀՊԱՆՈՒԹԻՒՆ»

Ռուսաց հրատարակութիւն, 3 պատկերներով, գինը 1 բուբլի։

Թող ամեն մարդ, որ տանջվում է սարսափելի արատի հետևանքներից, կարդայ այդ գիրքը. նա ազատեց չատերին հաստատ կորուստից։ Մի բուբլի ստանալուց յետոյ Լէյպցիգի Ռ. Ֆ. Բիրէյի հրատարակողի մագազինը ուղարկում է գիրքը ցանկացողներին։ Հասցէն՝ Германія (R. F. Bierey's Verlags-Magazin Leipzig). 4—50 (Շ)

Въ редакціи газеты „МШАКЪ“ продаются слѣдующія брошюры: 1) „Экономич. Положеніе Турецкихъ Армянъ“, публич. лекція Д—ра Г. Арцруни, перев. съ арм. А. Аракелянца. Цѣна 25 к. 2) Die Oekonomische Lage der Armenier in der Türkei, ein öffentl. Vortrag von Dr. Grigor Arzruni, übersetzt von A. Amirchanjanz. Preis 25 k. 3) Die Hungersnoth in Türkisch-Armenien, ein Vortrag von Dr. Grigor Arzruni, übersetzt von Amirchanjanz. Preis 20 kop.

Иногородные, желающіе получить брошюры, благоволятъ присылать по 30 коп. почтовыми марками, за каждую брошюру.

Адресъ. Тифлисъ, Редакція „Мшакъ“, или Tiflis, Redaction „Mschak“. (Շ)

ՎԷՌՆԻՃԻ, ԶՄՈՒՌԻ ԵՒ ՓԱՅԼԱՆԵՐԿԻ

ԿՈՎԿԱՍԻ ԱՌԱՋԻՆ ԳՈՐԾԱՐԱՆԸ

Սրանով պատիւ ունի յայտնելու պ.պ. առևտրականներին և վէռնիճի (լակ), զմուռի և փայլաներկի (պօլիտուրա) գործածողներին, որ ունի յիշեալ ապրանքների բոլոր տեսակները, որոնք յետ չեն մնում միւս գործարաններից, ինչպէս իրանց մաքրելի գնով, այնպէս էլ իրանց լաւ յատկութեամբ։ Պատուէրները ընդունվում և կատարվում են անմիջապէս։

ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ԴԱՐՍԵԼԸ ԵՒ ԿԱՊԵԼԸ ԿԱՏԱՐՎՈՒՄ Է ԱՄԵՆԱՑՆ ԽՆԱՄՔՈՎ ԳՈՐԾԱՐԱՆԱՊԵՏԻ ԱՆՄԻՋԱԿԱՆ ՀՍԿՈՂՈՒԹԵԱՆ ՆԵՐՔՈՇ։ Մանրաման պայմանները նշանակված են պրէյս-կուրանտի մէջ, որը տրվում և ուղարկվում է ձրիաբար։ Օտարաքաղաքացիների պահանջները կատարվում են ամենայն ճշդութեամբ և անյապաղ։ Գործարանը և պահեստը գտնվում են Ելիզավետինսկի փողոցի վրա, տուն Զիթախեանի, № 25։

Հասցէն. Тифлисъ, Самуилу Леонтьевичу Ходорскому.

10—20 (Շ)

ԱՋԴ ՇԵՐԱՄԱՊԱՀՆԵՐԻՆ

Նոր ստացված են Պատերի ցէլիւլէր սիստեմայով պատրաստած ՇԵՐԱՄԻ ՍԵՐՄԵՐԸ Ֆրանսիայից և Իտալիայից։ Աչողութեան համար երաշխաւորութիւն է տրվում։ Սերմի 1 զօլոտնիկ արժէ 1 բուբլի։ Ֆունտը 75 բուբլի։ Դիմել պահանջներով Թիֆլիս՝ Լէրիսէին, Միքայէլեան կամուրջ № 12. (Тифлисъ, Лерисе, Михайловскій мостъ № 12). Սերմերը ուղարկվում են փոստով։ Փոստի ծախսը առանձին։

Լէրիսէ հրաւիրում է շերամապահութեան սիրողներին չը սպասել մինչև տաք եղանակը սերմերը պահանջելու համար։ Աչողութեան գլխաւոր պայմաններից մին է, երբ սերմը անց է կացնում ձմեռը տեղի վրա։ 2—3

Արդէն ծախվում են կատարելագործված, սպիտակ բոցով, անվտանգ

ՇՎԷԴԱԿԱՆ ԼՈՒՑԿԻՆԵՐԸ

ԱՄԵՆԱԷԺԱՆ ԳՆՈՎ։

Մեծ քանակութեամբ առնողներին ՆՇԱՆԱՒՈՐ ԶԻՋՈՒՄՆ ԿԸ ԼԻՆԻ։

Գործարան Գ. Ա. ՏԷՐ-ԱՍԱՏՈՒՐԵԱՆԻ և ընկերութեան, Թիֆլիսում, ՎԷՐԱ կոչված թաղում։

19—50

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԺԻՐԱՐԴԻ ՄԱՆՈՒՖԱԿ-

ՏՈՒՐԱՅԻՆ ՊԱՀԵՍՏՈՒՄ

ԱՄԱՌՎԱՑ ԿԵՐՊԱՍՆԵՐ կանանց և երախաների զգեստների համար։

ԳՈՑՆԱՒՈՐ ԿԵՐՊԱՍՆԵՐ տղամարդկանց զգեստների համար։

Պարուսինա, (քաթան) կօլոմէնկա, մոխրագոյն և սպիտակ բոգոժա, և մուլեսկին կիտելների համար։

Ներկայ թուի փետրվարի 1-ից բացված է ԲԱԺԻՆ ՑԱՏԿԱՊԷՍ **ՄԷԲԷԼԻ** և **ՎԱՐԱԳՈՅՐՆԵՐԻ** համար գործածվող կերպասների։

ԴՕՆՆԷՐ և ԼԷՑՑ

Պահեստի բաժինը ԲԱԳՈՒԻ մէջ, Օլգինսկայա փողոցում։

2—5

ՎԱՃԱՌՎՈՒՄ Է ԼԷՕԻ „ԾԱՅՐԵՐ“-Ը

ԳԻՆՆ Է 20 ԿՕՊԷԿ

Կարելի է ստանալ Թիֆլիսում՝ Յոնան Դաւթեանից (Ելիզավետեան փողոց, № 25) և „Աղբիւրի“ վաճառանոցում։ ԲԱԳԻՈՒՄ՝ Տիգրան Ղոնդախսազեանից, ՂՈՒԲԱՅՈՒՄ՝ Խաչատուր Փանեանցից, ՆՈՒԽՈՒՄ՝ Սիմէօն Շահբազեանցից և ՇՈՒՇՈՒՄ՝ Անդրէաս Աբրահամեանցից։

3—5 (Շ. Հ.)

Дозволено цензурою, Тифлисъ 12 Февраля 1888 г.

Типографія Канцеляріи Главнонач. Гражд. час. на Кавк., Лорисъ-Меликовск. ул. д. каз.